ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՁ-23/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
7	Կոստյումներ (Կիտել)՝ համապատասխան ուսադիրներով և թևքանշանով, սպիտակ կտորից (արական սեռի) տոնական, մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Երրորդ դասի խորհրդականից մինչև արդարադատության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար միակոճկուն, միաշարք երեք ոսկեգույն մեծ կոճակներով, կարովի թիկնամասով և փողքերի կտրվածքով (ձև N 10, նկար 6): - 60 հատ Արդարադատության առաջին, երկրորդ և երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար երկկոճկուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն մեծ կոճակներով՝ տեղադրված երկշարք, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի (ձև N 10, նկար 4 և 5): - 170 հատ Կոստյումներ (Կիտել)՝ համապատասխան ուսադիրներով և թևքանշանով, սպիտակ կիսաբրդյա կտորից՝ (իգական սեռի) տոնական, մարմինը կիսագրկող մակերեսով, հետ ծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունի կափույրով ծածկվող թեք կտրվածքով ներկարված գրպաններ, դեպի ձախ կոճկումով միաշարք երկու ոսկեգույն մեծ կոճակներով (ձև N 10, նկար 8): - 35 հատ Մանրամասների համար օգտվել ‘‘Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և դրանք կրելու կարգը’’ սահմանելու մասին ՀՀ կառավարության 04.09.2014թ N-958-Ն և 23.02.2022թ. թիվ 231-Ն

	որոշումների դրույթներից: Մատակարարը պարտավոր է իր ֆինասական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված, արտոնագրված կամ էտալոնային փորձագիտական լաբարատորիայի կողմից տրված գործվածքի բաղադրության վերաբերյալ լաբարատոր հետազոտության եզրակացությունները: • Պահանջվում է անհատական կար յուրաքանչյուրի համար՝ համապատասխան չափի և ձևի ուսադիրների ամրացմամբ: • Արտաքին տեսքը և գործվածքի երանգը նախօրոք պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: • Արտաքին տեսքը պետք է լինի ըստ ՀՀ քննչական կոմիտեի կողմից հաստատված նմուշի: • Մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր համազգեստի չափսերը վերցնել ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներում: • Կարված համազգեստի ցանկացած բաղադրիչի չափս ենթակա է փոփոխման կարողի կողմից տարվա ընթացքում: • Հանդերձանքը պետք է ունենա փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեսականու անվանումը և ծառայողի անուն ազգանունը: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը իրականացնում է մատակարարը՝ ըստ պատվիրատուի նշված հասցեների:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՁ-23/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
7	